

ՅՈՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՍԻՆՕԴԻ

ՎԱՐՉԱԿԱՆՔ

13 Դեկտեմբ. Արժ. Ներսէս վարդապետ Սուլէյմանեան նշանակուած է վանահայր սուրբ Թակովբայ վանուց Արցախու. առաջադրուած է Հուշոյ Կոնսիստորիայն նոյն վանքի արդիւնքից իւր նկատողութեան համեմատ տարեկան պատշաճաւոր հանդերձագին և սնունդ որոշել յիշեալ վարդապետին. նոյն վանուց զրուծեան կայից և կալուածոց որքանութեան մասին տեղեկագրելով Սինօդին:

11 Դեկտեմբ. Արժ. Գրիգոր վարդապետ Տէր Ստեփաննոսեան արձակուելով հիւրընկալութիւնից՝ տեղը նշանակուեց հիւրընկալ Մայր Աթոռոյս Գեր. Յովհաննէս Եպիսկոպոս Տէր Եարութիւնեան:

9 Դեկտեմբ. Արժ. Թակովբ վարդապետ Նորատունկեան նշանակուած է վանահայր Ամարասու վանքին, և առաջարկուած է Վարարադու լիճի կառավարիչ Գեր. Գրիգոր Արքեպիսկոպոս Սաքինեանին որոշել տարեկան պատշաճաւոր սնունդ և հանդերձագին, և տեղեկագրել Սինօդին նոյն վանքի զրուծիւնը:

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆՔ.

2 ն Դեկտեմբ. Հմայեակ Արեղայն Մանուկեան Արշարունի զրկուած է կուսակրօն քահանայութիւնից և յանձնուած է քաղաքական իշխանութեան՝ զասել ընդ հարկատուս և այս՝ իւր յ2ն Օգոստոսի 1882 ամի նամակին համաձայն առ հանգուցեալ Կաթողիկոսն աղգիս Տ. Քէորդ Գ. որով խոյս տալով ի ձեռաց Հոգևոր Իշխանութեան յայտնուէր չը ձանաչել իրան հոգևորական:

Հրաման նՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԸԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ԻՆՔՆԸԿԱԼԻՆ ամենայն Ռուսաց Իւուսաւորչական Հայոց Սինօդէ Սրբոյ Էջմիածնի Տպարանական Ժողովոյ Աթոռոյս:

Ըստ հրամանի նորին Ապսերական Մեծութեան ի Սինօդիս լուան Զգեկուցումն. Վիճակային Կոնսիստորիայն Հայոց Վրաստանի յայտարարութեամբ ի 28 նոյեմբ. 1883 ամի № 3566 ծանուցեալ է Սինօդիս լիճ ի ստանալն ի Սարգիս աւագ քահանայէ Աղաջանեանց զկալուածական հաշիւս Աթոռոյս և ի յանձնելն նորոգ կարգեալ վերատեսչաց Գրիգոր վարդապետի Գառնակերեան և Յովհաննէս քահանայի մնացեալ էր ի վերայ Աղաջանեանց աւագ քահանային ըստ մատուցեալ մատենի 4263 ռ. 69 կ. Յորպիսի գումարաց յիշեալ քահանայն առաջի բարեալ է Սինօդիս ընդ յայտարարութիւն ջ2 ն Դեկտեմբ. 1883 ամի № 30 զ300 ռուբ. իսկ վասն մնացեալ 3933 ռ. 66 կ. գումարացն թախանձելով զերկայնմտութիւն Սինօդիս ետ զօրինաւոր մոր-

Հակ գրեալ ի 26 Դեկտ. 1883 ամի պայմանաւ. հատուցանելոյ զայնս զկնի չորից ամսոց. այն է ի 26 Ապրիլի 1884 ամի, և ի վերայ հիման պարտամուրհակի փոխանակ հատուցանելոյ լրիւ զգումար պարտուց ի սահմանեալ ժամանակի ի 26 Ապրիլի 1884 ամի, ընդհակառակն յայտարարութեամբ իւրով ի 21 Ն Յունիսի 1884 ամի մատոյց Սինօգիս զմի հատ 6¹/₂ բիլէթ բանկին Ազնուականաց Տիխիսու ի գին 1000 ռուբ. զոր վաճառեալ գոյացաւ միայն 821 ռ. 25 կ. Բաց յայսմանէ Սինօգս զիջանելով ի բազմադիմի թախանձանս յիշեալ աւագ քահանային և տալով նմա միջոցս առ ի գիւրութեամբ հատուցանելոյ զպարտիս իւր՝ ընկալաւ ի հաշիւ պարտուցն նաև զ260 ռ. ճանապարհածախս վճարեալս հանգուցեալ Գաբրիէլ Արքեպիսկոպոսի մասնաւոր ստորագրութեամբ՝ ի գնալն ի Բորժում, 480 ռ. ճանապարհածախս տուեալս աշակերտի ճեմարանի Զաքարեանցի ըստ մասնաւոր նամակի, նոյնպէս և զճանապարհածախս իւր ի գալն ի սուրբ Էջմիածին և ի վերադառնալն 490 ռ. ամենն զ430 ռ. զորս հանելով ի գումարաց պարտուցն մնայ ի վերայ նորա 2651 ռ. 67 կ. Այլ ի վերայ այսր ամենայնի նա առ ոչինչ գրելով զայսօրինակ զիջողութիւնս արարեալս նմա ի Սինօգէս և չհայելով ի բազմադիմի պահանջ սորին և զանց առնելով զպայմանաւ պարտամուրհակին յետաձգեաց զվճար պարտուցն այսքան տարապայման ժամանակս, մինչ Սինօգս ստիպեալ ի հարկէ, գիմեաց ի դատարանս ի պահանջ պարտուց նորին։ Իսկ նա Աղաջանեանց փոխանակ կամովին գալոյ ի վճար պարտուցն ջանահաւոր լինէր զանազան անհիմն թղթովք մերժել զպահանջ Ծայրագոյն Հոգեւոր իշխանութեան իւրոյ հակառակ իւրոյ պարտամուրհակին։

Աւստի և ՀԲԱՄԱՅԵՑԻՆ. — Որովհետեւ Սարգիս աւագ քահանայն Աղաջանեանց հակառակ հրահանգութեանց Սինօգիս աւանդելոց նմա հրամանօք և կարդին ստորագրելութեան, յիւրումն ժամանակի չէ առաջարկեալ Սինօգիս զստացեալ զրաման Աթոռապատկան կալուածոց տարապայման ժամանակաւ պահելով առ ինքն զարդիւնս կալուածոց, և երբ ի յայտ է եկեալ ի վերայ նորա հաշիւ դրամոց, յայն գէպս նա, փոխանակ հատուցանելոյ զգումար հաշւոյ մնացելոցն յիւր վերայ տուեալ է զպարտամուրհակ և իրբեւ պարզ պարտապահ Աթոռոյս ցարդ չհատոյց զպարտիս իւր հակառակ պայմանի իւրոյ և բազմադիմի զիջողութեանց Սինօգիս, և որ առաւել աններելին էր նմա, իրբեւ անձն հոգեւորական աշխատեղև ի տարապարտուց անհիմն թղթովք հերքել և ստել առաջի քաղաքական դատարանին զպահանջ իւրումն Ծայրագոյն Հոգեւոր իշխանութեան. վասն որոյ և առնել զհետեւեալս. ա.) հրամանագրել Աիճակային Առնիստորիային Հայոց Արաստանի կարճելով ի դատարանի զգործ 2651 ռ. 67 կ. պահանջից Սինօգիս՝ դադարեցուցանել զՍարգիս աւագ քահանայն Աղաջանեանց ի քահանայագործութենէ և առեալ ի նմանէ զպատիւ աւագ քահանայութեանն, զլանջական խաշն և զկամիլաւկայ կոչեցեալ զլիարկն հանգերձ Հայրապետական կոնդակօք՝ փութով առաջի առնել Սինօգիս. Իսկ վիճակաւոր Առաջնորդի տեղւոյս պատուիրել, զձեռական ժողովրդականս նորա ըստ իւրումն նկատողութեան յանձնել միում ի բաբելոյս

և ի հաւատարիմ՝ քահանայից տեղւոյն ի հովուութիւն և դամնայն քահանայական արդիւնս բաժանել ի չորս մասն, յորոց երկուսն ընդունել ի հաշիւ պարտուց նորա առ Աթոռս ի գումարի 2651 ռ. 67 կոպ. զմի մասն տալ ընտանեաց արգելեալ Սարգիս քահանային և զմի մասն թողուլ յօգուտ հովուող քահանային, Բ.) զդադարեցուցմանէ նորա ի պատուոյ աւագ քահանայութեանն ի կամիլաւկայէ և յայլոց պարգեաց վասն անհարադատ ծառայութեանց նորա շրջաբերական հրամանօք հրատարակել ընդ ամենայն թէմս Հայոց Ռուսաստանի ի թիւս որոց և Տպարանական ժողովոյդ պատուիրել հրատարակել միջոցաւ Արարատ ամագորոյ ի խրատ և ի զգուշութիւն միւսոց հոգեւորականաց Հայոց, ի 13 Դեկտեմբերի 1885 ամի ի սուրբ Էջմիածին:

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ.

Ըստ խնդրանաց Տպար. Ժողովոյ՝ Ա. Էջմիածնի, Սինօզն հրամայած է նշանաւոր զիջումն անել ձայնագրեալ Ժամագրոց և Ա. Պատարագի երգեցողութեան՝ ձայնագրագիտաց զիւրամատչելի լինելու համար:

Չայնագրեալ Ժամագիրքն փոխանակ 25 թուրլու՝ այսուհետեւ կը վաճառուի 8 թուր. իսկ Երգեցողութիւն Ա. Պատարագի՝ 3. թուր. կանխիկ:

Իսկ միւս գրքերն 20% զիջումն՝ նոյնպէս կանխիկ:

Յանկացողները թող դիմեն Տպար. Ժողովին, Թեմական Լտեաններին, Հոգ. Կառավարութեանց և Կենտրոնական Գրավաճառանոցին Տփլիսոյ և Ընդրակովկասեան գրավաճառանոցին Եղէքսանդրապօլու: